

Շրջակա միջավայրի նախարարության

«Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ

---

# ԱԳՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ

# ՏԵՂԵԿԱԳԻՐ

# 2025

---

Սեպտեմբերի երկրորդ տասնօրյակ

Տեղեկագիրը կազմել է ագրոօդերևութաբանության բաժինը՝ մասնագիտացված ագրոօդերևութաբանական կայաններից ստացված տեղեկատվության հիման վրա:

Տեղեկագրի պատասխանատու՝ տնօրենի տեղակալ Գ. Սուրենյան

## ՀԻՄՆԱԿԱՆ ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Սեպտեմբերի երկրորդ տասնօրյակում օդի միջին ջերմաստիճանը հանրապետությունում եղել է ցածր 2-3 աստիճանով:*




*Տասնօրյակի ամենաբարձր ջերմաստիճանները Տավուշում գրանցվել են +23..+25$^{0}$C, Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ +22…+24C, նախալեռնային շրջաններում՝ +29…+31$^{0}$C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +28…+30$^{0}$C, նախալեռնային շրջաններում՝ +22…+26$^{0}$C, Շիրակում՝ +21…+26$^{0}$C, Կոտայքի լեռնային շրջաններում՝ +22…+25$^{0}$C, նախալեռնային շրջաններում՝ +24...+26$^{0}$C, Գեղարքունիքում՝ +18…+23$^{0}$C, Լոռիում՝ +20…+23$^{0}$C, Արմավիրում, Արարատում՝ +29...+31$^{0}$C, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ +21…23$^{0}$C, նախալեռներում՝ +23…+28$^{0}$C:*

*Տասնօրյակի ամենացածր ջերմաստիճանները Շիրակում գրանցվել է +4…+5$^{0}$C (Աշոցք՝ -1$^{0}$C), Կոտայքի լեռնային շրջաններում՝ +2...+4$^{0}$C, նախալեռնային շրջաններում՝ +5…+7$^{0}$C, Տավուշում +7…+11$^{0}$C, Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ +2...+4$^{0}$C, նախալեռնային շրջաններում՝ +6…+8$^{0}$C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +10…+14$^{0}$C, նախալեռնային շրջաններում՝ +6…+8$^{0}$C, Գեղարքունիքում՝ +1…+4$^{0}$C, Լոռիում՝ +3…+7$^{0}$C (Օձուն՝ +9), Արմավիրում, Արարատում՝ +7…+9$^{0}$C, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ +1…+3$^{0}$C, նախալեռներում՝ +6…+8$^{0}$C:*




*Տասնօրյակի ընթացքում տեղումների գումարային քանակը Լոռիում կազմել է 34-50մմ (200-417%), Շիրակում՝ 34-37մմ (340-463%), Տավուշում՝ 38-50մմ (317-357%), Գեղարքունիքում՝ 25-53մմ (223-767%), Արագածոտնի լեռնային շրջաններում՝ 32-62մմ (246-477%), նախալեռնային շրջաններում 10-21մմ (200-300%), Կոտայքի լեռնային շրջաններում՝ 15-36մմ (188-327%), նախալեռնային շրջաններում՝ 13մմ (260%), Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ 27մմ (245%), նախալեռնային շրջաններում՝ 8մմ (267%), Արմավիրում՝ 2-6մմ (67-150%), Արարատում՝ 4...17մմ (200-567%), Սյունիքի հովտային շրջաններում՝ 1-17մմ (7-283%), նախալեռնային շրջաններում՝ 26-53մմ (212-260%):*

*Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանները գրանցվել են լեռնային շրջաններում՝ 0...+4$^{0}$C, նախալեռնային և հովտային շրջաններում՝ +5....+10$^{0}$C:*



## *Վեգետացիոն ինդեքսի ընթացիկ ընթացքն անցյալ տարվա և բազմամյա միջինի համեմատ*



























**Մշակաբույսերի աճն ու զարգացումը**



*Տասնօրյակի ընթացքում շարունակվել են գյուղատնտեսական աշխատանքները:*

*Հովտային շրջաններում կատարվել է պտղատուների, բանջարանոցային մշակաբույսերի, խաղողի, ծմերուկի, սեխի, եգիպտացորենի, լեռնային և նախալեռնային շրջաններում՝ հնդավորների, կարտոֆիլի, կաղամբի բերքահավաք:*

*Նախալեռնային շրջաններում սկսվել են աշնանացան ցորենի նախացանքի աշխատանքները:*

*Լեռնային շրջաններում շարունակվել է աշնանացան ցորենի ցանքը, տեղ-տեղ հափիկը կպցել է:*

*Տասնօրյակի վերջին դիտված տեղումները դժվարեցրել են բերքահավաքի աշխատանքները, սակայն բարձրացրել են հողի խոնավության պաշարները՝ բարելավվելով աշնանացանի նախացանքի, ցանքի, հափիկի աճի պայմանները:*